«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 1692-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 1692-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 1692-Լ որոշման հավելվածի՝

- ամբողջ տեքստում «Արտակարգ իրավիճակների նախարարություն» բառերը փոխարինել «Ներքին գործեր» բառերով, իսկ «ԱԻՆ» բառը՝ «ՆԳՆ» բառով,
- 8-րդ գլխով սահմանված՝

ա) 8-րդ միջոցառման «**Ակնկալվող արդյունք(ներ)**» սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բնահեն լուծումների վրա հիմնված՝ էկոմահակարգային մոտեցմներուվ հեղեղումների դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ համապատասխան մասնագետների վերապատրաստում» .

բ) 10-րդ միջոցառման «Կատարող (ներ)» սյունակի «ՀՀ ԱԻՆ» բառերը փոխարինել «ՀՀ ՇՄՆ» բառերով, իսկ «Համակատարող (ներ)» սյունակի «ՀՀ ՇՄՆ» բառերը՝ «ՀՀ ՆԳՆ» բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: